**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2025թ. N ՄՈ/140 -Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն հրամանի հավելվածի 6-րդ գլխի 1-ին և 2-րդ ենթակետերի և հավելվածի 1-ին գլխի 5-րդ կետը.

***ո ր ո շ ու մ ե մ՝***

***1. Հ ա ս տ ա տ ե լ՝***

1) Մարզային կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.
2) Մարզային առարկայական հանձնաժողովների նախագահների անվանական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.
3) Մարզային առարկայական հանձնաժողովների նախագահների անվանական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.
   Մարզային կազմկոմիտեի նախագահին (Ս.Բուդաղյան)՝ կազմկոմիտեի աշխատանքներին մասնակից դարձնել «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Շ. Աթոյանին և «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գ.Ներսիսյանին:
4) Մարզային կազմկոմիտեի նախագահին (Ս.Բուդաղյան)՝ կազմակերպել 2024-2025 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլը:

5) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ /պարտականությունները կատարող Ա.Հակոբյան/ օլիմպիադայի տարածքային և մարզային փուլերը անցկացնելու համար իրականացնել անհրաժեշտ գրենական պիտույքների գնման գործընթաց:
6) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-01-16 09:53:25 GMT+4
Հավաստված է eID-ի կողմից

**ՄԱՐԶՊԵՏ՝** **ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

**Հ ա վ ե լ վ ա ծ  N 1**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2025 թվականի հունվարի 15-ի N ՄՈ/140 -Ա որոշման

## ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

**Ն ա խ ա գ ա հ՝**

Ս. Բուդաղյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

**Ա ն դ ա մ ն ե ր՝**

Ս.Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ն,Ալավերդյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Լ.Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 15.01.2025 17:31:29 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի հունվարի 15 -ի N ՄՊ/140 -Ա որոշման

# ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԿԱԶՄ

| հ.հ. | Առարկա | Հանձնաժողովի նախագահ | Կազմակերպությունը |
|---|---|---|---|
| 1. | Մաթեմատիկա | Ավանեսյան Ռոբերտ | Վաղարշապատի Գ.Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց |
| 2. | Ֆիզիկա | Սարգսյան Գոհար | Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց |
| 3. | Քիմիա | Ստեփանյան Լուսինե | Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց |
| 4. | Կենսաբանություն | Մկրտչյան Անի | Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց |
| 5. | Ինֆորմատիկա | Հարությունյան Թագուհի | Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N 1 հիմն. դպրոց |
| 6. | Հայոց լեզու | Մամիկոնյան Սուսաննա | Վաղարշապատի Մ.Գորկու անվան N 5 ավագ դպրոց |
| 7. | Պատմություն | Պետրոսյան Անահիտ | Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմն. դպրոց |
| 8. | Գերմաներեն | Կարապետյան Նոնա | Ջրառատի միջնակարգ դպրոց |
| 9. | Անգլերեն | Պետրոսյան Ալլա | Վաղարշապատի Մ.Գորկու անվան N 5 ավագ դպրոց |
| 10. | Ֆրանսերեն | Իսայան Գայանե | Ակնալճի միջնակարգ դպրոց |
| 11. | Ռուսաց լեզու | Թովմասյան Նաիրա | Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց |
| 12. | Աշխարհագրություն | Գրիգորյան Արփինե | Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց |
| 13. | Հայ գրականություն | Աբրահամյան Մեդորա | Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց |
| 14. | Նախնական զինվորական պատրաստություն | Դալլաքյան Անահիտ | Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

15.01.2025

VERIFIED OCSP 15.01.2025 17:32:39 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023